

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015Թ.

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

30.12.2015թ.-ին Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ն. Պետրոսյանի

Մասնակցում էին՝ ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրենը, բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները, արվեստի դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչներից ներկայացուցիչներ:

Լսեցին Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի հաշվետվությունը 2015թ. 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2015թ.վականի 2-րդ կիսամյակում գյուղապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 168 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
- Գյուղապետարանը ստացել է 31 պաշտոնական նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:
- Բնակիչներին տրվել է 686 տեղեկանք:
- Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափազրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:
- 2015թ.բյուջեի սեփական եկամուտները, որոնք կազմում են տարեկան 32744.3 հազ. դրամ, մուտքագրվել է 33498.4 հազ. դրամ, այսինքն կատարողականը տարեկան նկատմամբ կազմել է 102.3 տոկոս: Ըստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են՝
 1. Հողի հարկ – պլան 20393.4 հազ. դրամ, մուտքագրվել է 20393.9 հազ. դրամ կամ 100 տոկոս:
 2. Գույքահարկ – պլան 11519.4 հազ. դրամ, մուտքագրվել է 12172.3 հազ. դրամ կամ 105.6 տոկոս:

3. Տեղական տուրք – պլան 560.0 հազ. դրամ , մուտքագրվել է 658.5 հազ. դրամ կամ 117.5 տոկոս:

4. Հողի վարձակալություն - պլան 271.5 հազ. դրամ , մուտքագրվել է 273.7 հազ. դրամ կամ 100.8 տոկոս:

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են՝
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 3528000 հազ. դրամ ֆինանսական աջակցություն :
- Մահացածների ընտանիքներին տրվել է 640000 հազ. դրամ ֆինանսական աջակցություն :
- Հասարակական կազմակերպություններին տրվել է 207500 հազ. դրամ ֆինանսական աջակցություն:
- Վերին Արտաշատի միջն. դպրոցին տրվել է 200000 հազ. դրամ ֆինանսական աջակցություն :
- Պարզևատրում ` ավագանու անդամներին , զոհված զին. ծառայողների ընտանիքներին և Հայրենական մեծ պատերազմի վետերաններին 420000 հազար դրամ ;
- Համայնքում ըստ գործող գրաֆիկի կատարվում է փողոցների աղբահանություն:
- Մեծ շուքով համայնքում անց են կացվել միջոցառումներ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախությանը , ինչպես նաև ուսուցչի տոնին , որոնց մասնակցել են համայնքի և հարակից համայնքներից հրավիրված բնակիչներ:
- Գյուղապետարանը առաջին դասարանցիներին ապահովել է պայուսակներով և գրենական պիտույքներով :
- Վերին Արտաշատ համայնքի Երևանյան փողոցում կատարվել է ասֆալտապատում 410 գծ. , որի վրա ծախսվել է համայնքի բյուջեից 18 մլն. ՀՀ դրամ :

Վերին Արտաշատ համայնքի



Ա. Ղազարյան